Աշխարհի տարածքին քաղաքական թատրոնը կը ծաղկի, մինչ հանդիսատեսներ կը փնտռեն բարդ իրադարձութիւններու յետին նշանակութիւնը: «Մարդիկ ծարաւ են իրենց կեանքին առնչուած թատրոն տեսնելու», կ'ըսէ ամերիկացի թատերագիր Նաոմի Ուալթս: Ան հեղինակն է «Պըրտի» թատերախումբին, որ այս օրերուն կը ներկայացուի Նիւ Եորքի մէջ: «Պըրտի» կը պատմէ Բ. Աշխարհամարտի մէջ վեթերանի մասին, որ կը տառապի հոգեբանական ցնցումներէ: Բրիտանացի թատերագիր Տէյվիտ Էտկար, որուն երկու թատերախումբեր բաղկացած մէկ գործը կը վերաբերի Միացեալ Նահանգներու ընտրութիւններուն, կը կոչուի «Քանթիներթըլ տիվայ» (ցամաքամասի երկփեղկում): Անիկա այժմ մեծ թիւով հանդիսատեսներ կը ներգրասէ Բ. Քալիֆորնիայի մէջ, ուր Առնոլտ Շվարցենբերցի թատերախումբի ընտրութեանը: «Թատերախումբը կ'ապացուցէ, թէ Սեպտեմբեր 11ի յարձակումները ինչպէս հետաքրքրութիւնը վերակեն-

դանացուցած են աշխարհաքաղաքականութեան նկատմամբ: «Անկէ առաջ համայնավարութեան քաղաքական մեծ երազը մեռած էր, եւ կը թուէր, թէ համաշխարհայնացումը հետզհետէ տեղ չէր ձգեր ազգային քաղաքականութեան, իսկ Եւրոպայի մէջ պետութեան դերը կը տկարանար, - կ'ըսէ ան: - Սեպտեմբեր 11էն ետք կ'անդրադառնանք, թէ իրօք քաղաքականութիւնը դեր մը ունի»:

Իրաքի պատերազմին պատճառով ստեղծուած երկփեղկումը միայն յաւելեալ կշիռ տուած է քաղաքականութեան: 1997ին Թոնի Պլէյրի Աշխատաւորական «Նոր» կուսակցութեան յաղթանակէն ետք, բրիտանացիք ընդհանրապէս ներշնչակ կը մտածէին եւ այլախոհ գաղափարներով թատերախումբերու կարիքը չէր զգացուէր: Այժմ տարակարծութիւնները եւ վարչապետ Պլէյրի կառավարութեան առթած յուսախարութիւնը պատճառ դարձած են, որ աւելի սուր դիտարկութեամբ թատերախումբը վերախոսուին Լոնտոնի թատերասրահներու Ուէսթ Էնդ շրջանին մէջ:

«Կ'արդիւնք երկրի մը մէջ, ուր ընդդիմադիր կուսակցութիւնը գոյութիւն չունի», կ'ըսէ գրագէտ Թարէք Ալի, որուն «Տիլլալթըրը քորփա» (ականաբոր դիակը) կատակերգութիւնը վերջերս բեմադրուեցաւ Լոնտոնի Սօսօ թատերասրահին մէջ: Թատերախումբը կը պատմէ քաղաքագէտի մը մասին, որուն կինը կը սպաննէ զինք, որովհետեւ ան իր ընկերվարական գաղափարները «վաճառած է» վարչապետ Պլէյրի վարչապետին հետեւելով: Ալի կը յուսայ, որ թատերախումբը ձեռքով մը դառնայ ընդդիմադիր ուժ՝ վարչապետ Պլէյրի կառավարութեան դէմ:

Ճափոնի մէջ, ուր պետութիւնը կը քննէ գինուրները իրաք ուղարկելու հարցը, Թ.Ք.Ք.Ք. «Օրաթերթ» թատերախումբը, որ կը ձգտէ օգտագործելու պայթուցիչ ծախսերու թիւներով: 1980ական տարիներէն ի վեր առաջին անգամ ըլլալով անիկա կանոնաւոր կերպով ելոյթ կ'ուներ այս մարդկայնութեամբ լեցուն սրահներու դիմաց, մինչդեռ անցեալին սրահին աթոռներուն մէջ կ'ընդունէր սովորաբար դատարկ կը մնար:

Կարգ մը վարչերու մէջ քաղաքական թատրոնը երկար պահուածութեան մը շարունակութիւնն է: Հարաւային Աֆրիկէի մէջ անիկա ար-

դիւնք է ցեղային խտրականութեան ժամանակներու գալոյթին: 1990ական տարիներուն նախկին դաժան օրէնքներու մեղմացումէն ետք շատեր կը կարծէին, թէ քաղաքական թատրոնը պիտի խամրէր: Իրօք, որոշ ժամանակ մը անիկա նահանջեց: Սակայն այսօր ոճ-րագործութեան, աղքատութեան եւ հիւանդութիւններու հարցեր արծարծող թատերախումբեր ամէնուրեք ներկայ են: Օրինակ, «ԱՐԹ» (Էնթի Ռեթրոպրոյթ) թատերախումբը թատերական հանդիպումներ կը կազմակերպէ եւ թատերախումբը կը ներկայացնէ երկրին զխաւոր թատերասրահներուն մէջ:

Անիկա նաեւ գիւղականներ կ'այցելէ եւ Սի-ՏԱԻ առնչուող պատգամներ կը փոխանցէ Հարաւային Աֆրիկէի հաւաքականութիւններուն:

Այժմու թատերախումբերուն մեծ մասը կը փորձէ ժամանակակից հարցերը դնել աւելի լայն պարունակի մէջ: Պրաքիլի մէջ քաղաքական թատրոնը սկսած է բազմութիւններ ներգրասել 1990ական տարիներու կէսերուն, երկրին մէջ գինուրական վարչակարգին վերացումէն շուրջ տասնամեակ մը ետք: «Մենք կը բեմադրենք քաղաքական այնպիսի թատրոն մը, որ հանրութիւնը կը մղէ դիմադրուելու երկրին մէջ տեղի ունեցող հարցերը», կ'ըսէ Սերփօ Տը Գարալիս: Ան «Պրաս» թատերախումբին թատերագիրն է եւ անոր բեմադրիչներէն մէկը: Անոր վերջին թատերախումբը՝ «Ուրբ քամրտի» (գործի կատակերգութիւն), որ մարքսական դիտանկիւնէն կը վերլուծէ Պրաքիլի դրամատուներուն սեփականացնողական արշաւը, ճամփաշարունակ ներկայացուցած Սան Փաուլոյի մէջ եւ ներգրասեց 70 հարգ հանդիսատես:

Թատրոնը համեմատաբար աւելի նուազ թիւով հանդիսատեսներ ունի, քան՝ պատկերասփռուին ու շարժապատկերը, ինչ որ առաւելութիւն մըն է, երբ հարցը կը վերաբերի զգայուն նիւթերու: Քաղաքական թատրոնը զարմանալիօրէն դիւրին կը կտրէ սահմանները: Պրաքիլի «Վերթիկ» թատերախումբին «Ափոքարիփս 1:11» թատերախումբը, որ կը վերակենդանացնէ Սան Փաուլոյի մէջ 1992ին ոստիկաններու կողմէ գործադրուած սպանդի մը պատմութիւնը,



Տէյվիտ Էտկարի մահուան հետաքննութիւնը՝ «Ճառափախիկ ուրը» թատերախումբի մէջ:

բեմադրուած է Լեհաստանի եւ Գերմանիոյ բանտերուն մէջ: Նաոմի Ուալթսի «Ռիթըրիթինկ ուրը» (մեկուսացող աշխարհ) թատերախումբը, որ Մոցի 1991ի պատերազմը կը ներկայացնէ բռնի ուժով Սատամ Հիւսէյնի ծառայող իրաքցի գինուրները մը դիտանկիւնէն, ներկայացուած է Հոյանտայի, Ֆրանսայի, Գերմանիոյ, Միացեալ Նահանգներու եւ Լոնտոնի մէջ (այս տարի Իրաքի պատերազմէն կարճ ատեն մը առաջ):

Թէեւ այս կենսունակ թատերախումբը առաւելաբար կեդրոնացած են ներկայի մտահոգութիւններուն վրայ, սակայն անոնցմէ ոմանք կը վերակենդանացնեն վաղեմի հարցեր: «Նիւրեմպերկ» թատերախումբը, որ առաջին անգամ բեմադրուած է 1996ին, «Թրայսալըը» թատերասրահին մէջ, Նիւրեմպերկի դատավարութեան ընդհանուր կը միաձուլէ թատերական ցնցիչ դիպաշարի մը: Թատերախումբը հարցականի տակ կ'առնէ պատերազմի իրաւականութիւնն ու պետութեան հաւատարիմ մնալու անհրաժեշտութիւնը եւ գանձեց կը հակադրէ բարոյական անձնակալ ըմբռնումներու հետ, ինչպէս նաեւ՝ մարդկային յառաջիկայութեան դիւրաբեկ բնոյթին: «Ճառափախիկ ուրը» թատերախումբը օժտուած է արիստոնէլեան դասական ողբերգութեան բոլոր տարրերով: Թատերախումբին խորապէս խոցելի տիպարներուն հանդուցէն կը ծնի մտածող մարդը, որ թակարդուած է պետական չահերու եւ լրատուական ցնցիչ վերնագիրներու լաբիրինթոսի մը մէջ: Թեթիս թատերախումբը բովանդակութիւնը անձնական թատերախումբի մէջ կ'արժեքները հարցական ժամանակակից հարցեր:

## ՀՈՎԻՆԵՐ ՈՉԻՆՉԵՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ ԿԸ ՍՏԵՂԾԵՆ

ԱՓՐԻԿԵՅԻ ԻՆՔՆՈՒՄ ԵՐԱԺՇՏՆԵՐ ԱՆՊԵՏԵ ԻՐԵՐՈՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊՈՐՏԻՔՆԵՐ ԿԸ ՇԻՆԵՆ ԵՒ ՅԱՐԳԱՆԵ ԿԸ ՊԱՐՏԱԴՐԵՆ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԵՉ՝ ՍՊԱՍԵԼՈՎ, ՈՐ ՃԱՆԱՉՈՒՄ ԳՏՆԵՆ ԻՐԵՆՑ ԵՐԿՐԻՆ ՏԱՐԱԾԵԻՆ: «Պի. Պի. Սի.» ԿԸ ԳՐԷ.

Լեւոնթոյն խումբ մը հովիւներ ազգի կտորներէ երաժշտական գործիքներ շինելով եւ անոնց վրայ երգեր կատարելով՝ իրադարձութիւն մը ստեղծած են երաժշտական աշխարհին մէջ: Անոնք իւրի դատարկ տուփեր, ինքնաշարժի անիւներ, ճիւղեր եւ խոհանոցի լուսացարան մը օգտագործելով՝ իրարու քով բերած են երկու ջութակ, պաս կիթառ մը եւ թմբուկ մը: Արդիւնքը կը կոչուի «ճանք ֆանք»:

«Ծառի մը ճիւղերը կտրեցի, որովհետեւ պէտք ունէի երկու գաւազանի՝ լուսացարանին շուրջ նեկտրական թելերը փաթեթելու համար, - կ'ըսէ թմբուկահար Միքայէլը: - Ապա զտայ անիւի մը պատեանը: Գտայ նաեւ մէկը, որ օգնեց ինձի պատեանը թմբուկին վրայ անցնելու, մինչ ես սկսայ զայն փաթեթել թելերով: Աւելի ուշ գտայ այլ անիւ մը եւ զայն կտրտեցի թմբուկին գաւազանները շինելու համար: Եթէ գանձեց անիւով շինած չըլլայի, արտաբերուած ձայնը լաւ պիտի չըլլար»:

Լեւոնթոյն Մարթի լեռներուն վրայ ապրող այս հովիւներ ինքնուս երաժիշտներ են եւ կը յիշեցնեն արեւելեան Աֆրիկէի արհեստաւորները, որոնք իրենց ապրուստը կ'ապահովեն կիթիչ արեւուն տակ աշխատելով:

Ռանտու կը նուազէ պաս, իսկ անոր զարմիկները՝ ուռականի թելերէ շինուած կիթառ: Չաքա կը նուազէ մէկ լարէ բաղկացած ջութակ մը (լա- շալ խումբին ամէնէն փոքր անդամն է՝ 14 տարեկան): Ան իր զարմիկին հետ կը պարէ: Այս 7 փոփոկեցիները այժմ կազմած են «Սօթօ ստուներտ» նուազախումբը: Անոնք գործիքներ կը շինեն եւ երաժշտութիւն կը յօրինեն միաժամանակ անասնապահութեամբ զբաղելով:

Խումբին հովանաւորը Մաքսիմոս անուկով հարաւաֆրիկեցի մըն է: Ան անցեալ Յուլիոսի հրապարակեց Օթոյի արտաշին ամփոփ սկաւառակը: Վերջերս խումբը շրջապտոյտ մը կատարած է դէպի Բրիտանիա եւ գնահատանքի արժանացած է: Սակայն Աֆրիկէի մէջ մարդիկ տակալին սկսեցին են անոր նկատմամբ: «Աֆրիկէի մէջ ըրազմաթիւ մտաւորականներ կարեւորութիւն չեն տար իրենց մշակոյթի երեւոյթներուն, մինչեւ որ անոնք Աֆրիկէէն զուրս ճանաչում գտնեն: Միայն այն ատեն անոնք կ'անդրադառնան, թէ բան մը կը կործանեն»:



«Ճանք ֆանք»-ի գործիքները շինուած են դատարկ տուփերէ, ելեկտրական թելերէ եւ փայտի կտորներէ:

կ'ըսէ Մաքսիմոս: - Խումբը Աֆրիկէի մէջ չի գնահատուիր, որովհետեւ ելեկտրոնիք գործիքներով ու սաքսոֆոնով աֆրիկեան փոփ երաժշտութիւն չի նուազեր»:

Սակայն ան կը նշէ, թէ խումբին անդամները «մտային ազատութիւն» գտած են, երբ անցեալ Յուլիոսի շրջապտոյտ մը կատարած են դէպի Բրիտանիա եւ ելոյթ ունեցած են Ուոմաթի փառատոնին: «Իրենց համար ամէնէն յատկանշականը անգլիացիներուն հետ հանդիպումն էր ոչ թէ զաղութատիրական պայմաններու մէջ, այլ՝ հաւատարմակարգի վրայ, - կ'ըսէ Մաքսիմոս: - Անոնք իրենց երաժշտութիւնը սորվեցուցին եւ ծանօթացան արեւմտեան երաժշտութեան: Կը ցաւիմ, որ Աֆրիկէի մէջ սպիտակամորթները նոյնքան յարգանք չեն ցուցաբերեր սեւամորթներուն նկատմամբ»:

Ան կը շեշտէ, թէ խումբին անդամները այժմ պէտք է «օգտագործեն իրենց տրուած առիթները եւ իրենց դրամը շահարկեն իրենց խումբին եւ հաւաքականութեան վիճակը բարելաւելու համար»:

«Այսօր երաժիշտ ըլլալը բարար չէ, - կ'ըսէ ան: - Կը յուսամ, որ անոնք հողաշերտ մը գնեն եւ մշակութային կեդրոն մը կառուցեն՝ համբարներ տալու, աշխատասենեակներ հաստատելու, իրեր վաճառելու եւ յարուստ բարդաւանդումի ենթահող մը ստեղծելու համար»:

## ՍՈՒՆԵԻ «ՃԻՉԸ»՝ ԸՐԱԲԽԱՅԻՆ ԺԱՅԹՔՈՒՄԻ ՍԸ ԱՐՉԱԳԱՆԳԸ

«ՏԸ ԿԱՐՏԻԸՆ» ԹԵՐԹԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ, ԷՏՈՒԱՐՏ ՄՈՒՆԻՔ ԵԹԵՐԱՅԻՆ ԲԱՐՁՐ ԽԱՒԻ ՍԸ ՓՈՒԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԱԻԵՐԺԱՅՈՒՑԱԾ Է ԻՐ ՀՌԶԱԿԱՒՈՐ ԳԵՂԱՆԿԱՐԻՆ ՄԷՋ

Աստղագէտները գտած են ճիշդ այն վայրը, ուր արդի ժամանակներու ամէնէն աւելի թատերականութեամբ յատկանշուած գեղանկարներէն մէկը ծնունդ առած է:

Էտուարտ Մունք «Տը Աքրիմ» (ճիշդ) գեղանկարին գաղափարը յղացած է, երբ կը քայլէր Օսլոյի Լիպարոշաուսէն փողոցէն, մինչ արեւը մար կը մտնէր:

Այդ պահուն ան լսած է «մեծ եւ անիւրը ճիշդ մը, որ կը ճեղքէր բնութիւնը»:

Գեղանկարին մուկ կարմիր երկինքը այդ զգացումին արտայայտութեանն աւելին էր: Գարմանահրաշ մայրամուտները յաջորդած են 1883ին աշխարհին միւս կողմը՝ Քրաքաթոյի հրաբուխին ժայթքումին, ինչպէս կ'ըսէ «Սքայ Էնտ Թեյսեփ» թերթին յառաջիկայ թիւին մէջ տեղ տեղած յօդուած մը:

«Տը Աքրիմ» մաս կը կազմէ շարք մը գործերու, զորս Մունք 10 տարի ետք գծած է Պերիլի մէջ: Ան գեղանկարներու այս շարքը կոչած է «Տը Ֆրիզ աֆ լաֆֆ» (կեանքի գօտեղրուազը): «Գեղանկարներուն մեծ մասը հիմնուած է տարիներու առջ Մունքի ապրած փորձառութիւններուն վրայ», կ'ըսէ աստղագէտ եւ արեւնայ գործեր հետազոտող մասնագէտ Տանըլտ Օլսըն, որ աստղագիտական իր կարողութիւնը ի գործ դնելով՝ ցարկ գտած է վան կոկի երկու գեղանկարներուն մէջ պատկերուած տեսարաններուն ճշգրիտ վայրն ու թուականը: Ան նաեւ ճշգրտ է անգլիացի պատմիչ Չոսըրի «Յրենքի» գլխի պատմութեան մէջ Պրիթլի շրջանը հարուստ աշխարհագրագէտ թուականը՝ 1340:

«Մունքի մահուան բնաբանով գեղանկարները յստակ են: «Տէթ աֆ տը մատը» եւ «Տէթ ին տը սիք ուււ» գեղանկարները իրագործուած են 1890ական տարիներուն: 1868ին մահացած էր գեղանկարիչին մայրը եւ 1877ին՝ անոր քոյրը: Կ'ըսէ Օլսըն: - Այս փորձառութիւնները համակած են զինք իր ամբողջ կեանքին ընթացքին, ինչպէս՝ մուկ կարմիր արնագոյն երկինքը»:

Օլսըն կը պաշտօնավարէ Թեքսասի պետական համալսարանին մէջ, ուր երկու այլ պաշտօնակիցներու հետ անոր մասնագիտութիւնն է գեղանկարներու մէջ փնտալ պատկերուած երկնային երեւոյթներու փաստերը: Քրաքաթոյի ժայթքումը փոշիի հսկայական



Արուեստաբաններ կ'ըսեն, թէ Էտուարտ Մունքի «Տը Աքրիմ» գեղանկարը կը խտացնէ պատերազմի արհաւիրքէն սարսափահար մարդուն

ամպ մը բարձրացուցած էր դէպի երկիրին մթնոլորտային բարձր խաւը, ինչ որ երկինքին պատկերը շրջած էր աշխարհի տարածքին:

Լոնտոնի Ռոյալ Սոսայթիին կողմէ հաւաքուած տեղեկութիւններ կը հաստատեն, թէ 1883ի Նոյեմբերէն 1884ի Փետրուարի միջեւ Նորվեկիոյ մէջ մայրամուտի արտասովոր ցոլքեր տեսնուած են: Տեղեկութիւնը հրատարակուած է Քրիսթիանայի (այժմ՝ Օսլո) մէկ օրաթերթին մէջ:

Երբ մասնագէտները Օսլո գացած են եւ Մոսկուային (անցեալի Լիպարոշաուսէն) փողոցին վրայ քայլու ժամանակ գտած են «Տը Աքրիմ» գեղանկարին մէջ պատկերուած նաւահանգիստն ու Հովտու կղզին:

«Փողոցը դարձաւ եւ անդրադարձանք, թէ կանգնած էինք ճիշդ այն տեղը, ուր Մունք կանգ առած էր, - կ'ըսէ Օլսըն: - Խոր գոհունակութիւն պատճառող փորձառութիւն մըն էր: Թէեւ ճիշդ վայրը գտնելէ աւելի կարեւոր էր գեղանկարին մէջ պատկերուած տեսարանին ուղղութիւնը ճշգրտել: Յստակ էր, որ Մունքը դէպի հարաւ վայրը գտնելէ աւելի կարեւոր էր գեղանկարին կողմը, ուր Քրաքաթոյի հրաբխային աղբամուղը ստեղծուած էր 1883էն 1884ի ձմեռը»:

Պատրաստեց  
Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

# ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱԽՄԵՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

## ԼԻՔԱՆՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ «ՆՈՔԹԻՐՆ»Ը

Տարեվերջի այս օրերուն մեծ աշխուժութեամբ տեղի ունեցող ցուցահանդէս - վաճառքներուն եւ մշակութային նախաձեռնութիւններուն իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ ԼիքաՆնի ազգային թանգարանը, որ ձեռնարկած է շարք մը նախաձեռնութիւններու:

Այսօր երեկոյեան ժամը 6:00էն մինչեւ իրիկուան ժամը 9:00ը, թանգարանը կը կազմակերպէ իր «Նոքթիւրն»ը, որ ցուցահանդէսներու շարքով մը հանրութեան դիմաց կը բանայ թանգարանին բոլոր գանձերը: Ցուցահանդէսները կ'ընդգրկեն գոհարեղէններու բաժիններ, թանգարանին պահեստանոցին մէջ պահ դրուած թանկագին իրեր, ինչպէս նաեւ թանգարանին տարբեր բաժիններուն վրայ կեդրոնացող վաճառքարկան ժապաւէնի մը ցուցադրութիւնը: Նշենք, որ ցուցահանդէսները կը շարունակուին մինչեւ 18 Յունուար:

### ԱՅՍՕՐ

- Փառասոց՝ երաժշտութեան եւ երիտասարդութեան «Շամս» փառասոց, «Պէրլուր» բառերարահ, մինչեւ 21 Դեկտեմբեր:
- Հայկական ձեռագործներու ցուցահանդէս, «Փրոմընտ» պանդոկ:
- «Մեքենայ երգեր»՝ 20 Դեկտեմբերի ժամը 20:30ին, «Մոնո» սրահին մէջ: Ելոյթ կ'ունենայ Գեորգ Քերեմբեյեան՝ դաշնակի ընկերակցութեամբ «Քամիլայի եւ մասնակցութեամբ Համագայի միջին «Կարկաչ» երգչախումբին:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Տը լա փենթիւր տեմփլըման», Սամիր Թապէթի գործերը, «Ալիս Մոդապոլայ» ցուցարահ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Լա Ռըշերշ տը լ'օմ օ սապլ», Անժելիքա Շրեօտըրի գործերը, «Կեօթե» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Կրանտ Է Ժեօն», «Ժանիկ Ռուպէյզ» ցուցարահ, մինչեւ 31 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Ալը-տըր» թանգարանի «Աշխարհային սալոն»ը թանգարանին ցուցարահին մէջ, մինչեւ 17 Յունուար:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Քիւլ պիւր», Քրիս Սերաֆին - Լէյնի գործերը, «Ձընել» ցուցարահ, մինչեւ 7 Յունուար:
- Թատրոն՝ «Քամա յալ արտ, քազալիքա մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քազիմ տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Պարսկոնա՝ զգացումներու քաղաք» խորագիրով «Արմաճան» հիմնարկին մէջ, Մարտի փողոց մինչեւ 6 Յունուար, ժամը 13:00էն 20:00, բացի Կիրակի օրերէն:
- Միացեալ համերգ Ամերիկեան համալսարանի եւ «Սոսայիթի» երգչախումբերուն, 17 Դեկտեմբերին համալսարանին մէջ, ժամը 20:00ին:
- «Ինքնակր» երգչախումբին եւ Սուրիոյ Ազգային սինֆոնիք նուագախումբի միացեալ համերգ: ՆՈՒՆ ՆԵՍՏՐՈՒՄԻՆ, 17 եւ 18 Դեկտեմբերին ժամը 20:00ին:
- Երգահանդէս՝ «Պարոք» համոյթը, 18 Դեկտեմբերին Ամերիկեան համալսարանին մէջ, ժամը 20:00ին:
- Նոր Տարուան ցուցահանդէս՝ «Սարազ Պէկ»ի մէջ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- ԼիքաՆնի սինֆոնիք նուագախումբի ելոյթ՝ «Սեյն Ժոզեֆ» համալսարանին մէջ, 18 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 20:30ին:
- Ձեռնային աշխատանքներու հաւաքական ցուցահանդէս՝ «Արուեստագետներու գրադուլ» խորագիրով: «Էփրով Տարբիտ» սրահին մէջ, մինչեւ 23 Դեկտեմբեր:
- Մանկական նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Ռոշան» ցուցարահին մէջ, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Սերունդէ Սերունդ» խորագիրով, «Ժանիկ Ռուպէյզ» ցուցարահին մէջ, մինչեւ 31 Դեկտեմբեր:

### ՕՂԵՐԵՒՅՅ



ՈՒՐԱԹ, 19 ԳԵԿՏԵՄԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՆՁՐԵՒՅՑ

ՋԵՐՄԱՍԻՏԱՆ 36°C

ԳՐԵՆՆԱԿ 10°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ 76%

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԵԱՆԻ մահուան քառասունընդամասնում, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱԲԷԼ ԳԵՐՈՐԳ ԱԲԷԼԵԱՆԻ (սարկաւագ) մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Ժուլիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱԼԻՍ ՄԱՐԶՈՒՄԱՆԵԱՆԻ (ծնեալ՝ Տէր Սահակեան) մահուան քառասունընդամասնում, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՌՈՋԱ ՄԻՐԱԶԵԱՆԻ (ծնեալ՝ Պողոսեան) մահուան քառասունընդամասնում, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 21 Դեկտեմբեր 2003, Ռժմէյի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

### «ԱԶԳԱԿ»Ի

#### ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն: 258526, 260115 եւ 241274:

### «ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ

#### ԾԱՆՈՒՑՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացատրութիւն են: Մահազգ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

## ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5618

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

### ՇՐՈՒՂՈՒՄԱՆ

1. Պարտաւորութիւն - Յետոյ:
2. Մրցութիւն - Ժողովրդական ստոյթ:
3. Աչք - Կրկնուած բաղաձայններ - Անբուն մնացած:
4. Էմիլ Զոլայի երկերէն - Մկնահարանուկ:
5. Հայ սպարապետ - Դարձեալ:
6. Յանդիմանել, կշտամբել:
7. Ըմբիշ - Շաղկապ:
8. Հայ դից - Վարսնակ - Գրական ստեղծագործութիւն:
9. Մկնուր - Արեւելեան տիտղոս:
10. Եհովա անուան կրճատուած ձեւը - Անձնական դերանուն:
11. Մօր առաջին կաթը - Քանապանի նահանգներէն:

### ՈՒՐԱՆԱՅԵՍ

1. Պէս - Անձով գրաւակաւ:
2. Գիրի տեսակ:
3. Իրերայաջորդ տառեր - Կանխել:
4. Ծմուռ - Յուցական անակաւ:
5. Ինչպէս - Յատկութիւն - Այբուբենէն:
6. Տառի մը զրացիները - Գոմէշի ձագ:
7. Ման - Պարտիզանները (հակ.):
8. Ջերմուկներ գտնող իշապանը - Յոգնակերտ մասնիկ - Արական անուն:
9. Ծամբել - Սուգ:
10. Ցարգանք - Երնէ կ: Ինչպէս - Իրերայապան:
11. Տնկելի ճիւղ - Ականջի կեղտ - Իրերայաջորդ գիրեր:

1	Պ	Տ	Պ	Տ	Ո	Ի	Ն	Ո	Մ	Ն
2	Ն	Ի	Տ	Ա	Լ	Ա	Ս	Ն	Ե	Ն
3	Ա	Ի	Ե	Ո	Ր	Գ	Ա	Ս	Ս	Ս
4	Կ	Ր	Ա	Ք	Ե	Ր	Ա	Ս	Ս	Ս
5	Ի	Մ	Ց	Ե	Ր	Ք	Լ	Ա	Ս	Ս
6	Տ	Ա	Տ	Ր	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս
7	Տ	Ի	Մ	Ո	Ր	Գ	Ս	Ս	Ս	Ս
8	Ր	Ա	Ն	Ի	Ք	Ր	Ա	Ս	Ս	Ս
9	Մ	Ա	Ր	Ի	Ո	Ր	Ա	Ս	Ս	Ս
10	Ա	Ս	Ս	Ո	Ր	Գ	Ս	Ս	Ս	Ս
11	Ց	Ա	Տ	Ր	Ա	Ս	Ս	Ս	Ս	Ս

ԹԻԻ 5617

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ



bezdig\_mezdig@hotmail.com

## ՍԱԿԱՐԱՆ

Պէրլուրի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագինները հետեւեալներն էին երկը. Սուրիական թղթակի 28,60 - 28,85 լ.ն. Բուլղարական տինար 5115,00 - 5140,00 լ.ն. Յորդանանեան տինար 2121,00 - 2131,00 լ.ն. Պահարէնեան տինար 3985,00 - 4010,00 լ.ն. Ա.Մ.Էմիրութեան տիրիամ 410,75 - 412,75 լ.ն. Քարաբան ռիալ 413,75 - 415,75 լ.ն. Մեյուտական ռիալ 402,00 - 404,00 լ.ն. Օմանեան ռիալ 3895,00 - 3920,00 լ.ն. Եգիպտական կիւնէ 220,00 - 230,00 լ.ն. Անգլիական սթերլին 2660,00 - 2670,00 լ.ն. Չուիցերիական ֆրանք 1200,00 - 1205,00 լ.ն. Թրքական լիրա 104,50 - 105,0 լ.ն. Կիպրական փաուստ 3175,00 - 3200,00 լ.ն. Ճափոնական հապար եէն 13,90 - 14,00 լ.ն. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն. Քանադական տոլար 1130,00 - 1135,00 լ.ն. Աւստրալիական տոլար 1108,00 - 1113,00 լ.ն. Եւրօ 1868,00 - 1878,00 լ.ն.

● ՈՍԿԻ  
Անգլիական մէկ ոսկի 157,000 - 162,000 լ.ն.  
Իրանեան մէկ ոսկի 142,500 - 147,500 լ.ն.  
Օմանեան մէկ ոսկի 131,500 - 136,500 լ.ն.  
Մեքսիկական փէսոս 755,000 - 775,000 լ.ն.  
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 19,715,500 - 19,915,000 լ.ն.  
Մէկ օնս ոսկի 409,30 - 409,80 \$  
Մէկ օնս արծաթ 5,68 - 5,70 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.  
Եւրօ 1.2389 - 1.2393  
Քանադական տոլար 1.3315 - 1.3320  
Չուիցերիական ֆրանք 1.2558 - 1.2563  
Ճափոնական եէն 107.57 - 107.62  
Մէկ սթերլին 1.7660 - 1.7664

Մէկ տոլար 565 դրամ

### ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. 62 դրամ Գիճի Բ. 62 դրամ  
Ա. կարգ 4.21 4.28  
Բ. կարգ 4.26 4.26

ԼՈՒՄԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

**ԽՈՑ (21 Մարտէն 20 Ապրիլ)**  
Անցնող տարուան տնտեսական հաշուեկշիռը պիտի ընէք եւ անոր արդիւնքը պիտի գտնէք գոհացուցիչ: Օրը ձեզի պիտի ներշնչէ նոր եւ օգտակար գաղափարներ:

**ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Քիչ մը կարծր վերաբերում մը պիտի ունենաք բարեկամի մը նկատմամբ՝ զայն ցնցելու համար, որպէսզի անդորդաւանայ իր ըրած սխալներուն: Բայց ձեր թելադրանքին մէջ եղէք աւելի դիւանագէտ եւ քիչ մըն ալ մեղմ:

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Փոփոխութիւններ տեղի պիտի ունենան ձեր գործատեղիին մէջ. նորեկ գործաւորներ կամ պաշտօնեաներ նոր շուկէ պիտի բերեն ձեր աշխատանոցին մէջ: Օրը լաւ է:

**ԽԵՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Ձեր գաւակներուն եւ ձեր հարազատներուն հետ ձեր յարաբերութիւնը քիչ մը դժուարուած է եւ քիչ մըն ալ լարուած: Այս կը նշանակէ, որ մօտեցած են Ս. Մնուղն ու Նոր Տարին:

**ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Եթէ ձեր տան վերաբերեալ գործիք կամ սարքաւորում մը խանգարուած է, շուտով նորոգեցէք, նախքան տնտեսական օրերը: Ուշադիր եղէք ձեր ունեցած գործիքներուն:

**ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Վիճելի խնդիր մը, որ ձեզի համար քիչ մը դժուար լուծելի կը թուէր, պիտի հարթուի դիւրութեամբ, եւ դուք շունչ մը պիտի առնէք թեթեւած սրտով:

**ԿՇԻՈՒՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Ձեր կատարած դրամական խնայողութիւնը արդիւնաւէտ պիտի ըլլայ եւ դուք շատ ուրախ պիտի զգայապա պատճառով: Ծարունակեցէք տնտեսել ձեր ունեցածը:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Կենսուրախ էք, խանդավառ եւ ամէն մարդ կը փնտռէ ձեր ներկայութիւնը: Ինչ լաւ բնաւորութիւն է այս, որ միշտ կ'ուրախացնէ իր շուրջիները: Երանի ձեզի:

**ԱՂԵՂՆԱԿՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Գործի մարզին մէջ ոչ ոք պիտի համարձակի մրցիլ ձեզի հետ: Այնքան զօրաւոր պիտի ըլլայ այսօր աշխատելու ձեր եռանդը: Ծարունակեցէք նոյն թափով:

**ԱՅՅԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Հիանալի երեկոյ մը պիտի անցընէք. հրաւիրեցէք ձեր բարեկամները միասնաբար ուրախանալու: Այսպիսի առիթներ քիչ անգամ կը ստեղծուին: Օրը բարի է:

**ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Այս օրերուն ինչ որ կ'ակնկալէք, մասնաւորաբար՝ յատուկ գնահատանքի մը վերաբերեալ, թերեւս չյաջողի: Բայց դուք մի՛ յուսահատիք, շարունակեցէք ձեր ջանքերը՝ տիրանալու յաջողութեան, որուն արժանի էք:

**ԶՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Պիտի հանդիպիք անձի մը, որ ձեզի պիտի բանայ աղուր դուռեր: Խանդավառութեամբ եւ սիրով հետեւեցէք անոր ցուցմունքներուն:

## ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ

19 Դեկտեմբեր 1953

### ԽԱՐԱԳՐԱԿԱՆ

## ԱՐԱԲ ԿԵՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ



Շարքէ մը ի վեր շատ կը խօսուի արաբ վեհապետներու խորհրդաժողովի մը մասին, որ հաւանաբար տեղի ունենայ Պէրլուրի մէջ: Լուրը առաջին անգամ տրուեցաւ եգիպտական թերթի մը կողմէ, բայց որեւէ պաշտօնական հաստատումի չարժանացաւ: Ներկայ պայմաններուն մէջ այդպիսի ժողովի մը գոյանալու մը անհնար է: Երբեք անհրաժեշտ կը նկատուի արաբ ղեկավարներուն կողմէ, որոնք կողմնակի ընկերակցութեան հասարակաց ընդթ ունեցող շատ մը կարեւոր խնդիրներ:

Այսպիսի ժողով մը ամէնէն աւելի կը պահանջուի եգիպտոսի կողմէ: Զօրավար Նեկիպ անգլիացիներուն հետ դժուարութեան մէջ է Սուէզի խնդրին առնչութեամբ: Անգլիա հետգետեալ աւելի անգիշող դիրք մը կը բռնէ այս հարցին մէջ: Գահիրէի կառավարութիւնը դիմելով ծանր երկրորդական մը առջեւ: Այս կացութեան առջեւ շատ հաւանական է, որ զօրավար Նեկիպ կ'ուզէ արաբական միւս երկրներու պետներուն հետ վերջնական համաձայնութեան մը յանգիլ եւ փարատել կարգ մը թիրախացուցիչներ, որոնք ծնունդ առած են եգիպտական քաղաքականութեան նկատմամբ:

Ատենէ մը ի վեր եգիպտոսէն կը

լսուին արաբական եղբայրութեան եւ համերաշխ գործակցութեան ձայներ:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Կ



## ՆԱԽԱՐԱՐ ՅՈՒՆԱՆԵԱՆ ԿԱՏԱՐԵՑ ԲԱՅՈՒՄԸ ՀԵՆՏՊՈՒԼԻ ԱՍԻԱԿԱՆ ՃՐԳ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Երեկ, կեսօրէ ետք ժամը 5:00ին, ժամուրի դաշտին մէջ տեղի ունեցաւ հէնտպոլի ախակա՛ն ակումբներու ճրգ ախոյեանութեան մրցաշարքին բացումը:

Բացման հանդիսութեան նախագահեց երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, որ կը ներկայացնէր Լիբանանի նախագահ Վոր. Էմիլ Լախունը:

Նշենք, թէ հէնտպոլի այս մրցաշարքը ձեւով մը պատրաստութիւնը պիտի ըլլայ յառաջիկայ տարի Աթէնքի մէջ (Յունաստան) տեղի ունենալիք 2004ի Ողիմպիականին:

## ԳԵՐՄԱՆՈՅ ԿՈՆՍՔՈՐԸՐՆԵՐԸ ԵՒ ԵՐԹԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱՍԱԻՈՐՈՒՄԸ



Ալլթոն

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պուլմեր-Լիկա) 17րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, վերադր Պրեմիեր մարզիկ Ալլթոն իր նշանակած կողին շնորհիւ, կոլաքորթներու ընդհանուր դասաւորման մէջ աւելիով բարելաւեց իր դիրքը, 16ի բարձրագր ներկայ յայտնաւորելով իր նշանակած կողերուն ընդհանուր թիւը:

Երթի մրցումներուն աւարտին այժմ կոլաքորթներուն դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

- 1.- Ալլթոն (Վերտըր Պրեմիեր) 16 կոլ
- 2.- Մարթին Մաքս (Հանգա Ռոսթր) 12 կոլ
- 3.- Վահիտ Հաշիմիան (Պոլսում) 11 կոլ
- 4.- Ռոյ Մաքայ (Պայերն Միւնխի) 10 կոլ
- 5.- Միլոսայա Քլոյզ (Քայզերսլաուերթըն), Քլաուսի Փիզաբ (Պայերն Միւնխի) եւ Եան Քոլբր (Պրուսիա Տորքունց) 9ական կոլ

	Յ.	Հ.	Պ.	ՆԾ.	ՍՏ.	ԿԵՏ
1. Վերտըր Պրեմիեր	12	3	2	45	20	39
2. Պայերն Միւնխի	10	5	2	40	19	35
3. Պայերն Լեյպցիգ	10	5	2	34	17	35
4. Շթուրթ	10	5	2	24	7	35
5. Պոլսում	7	5	5	30	22	26
6. Պրուսիա Տորքունց	7	4	6	29	25	25
7. Վոլֆսպուրկ	8	1	8	35	32	25
8. Շալքե	6	6	5	23	23	24
9. Համպուրկ	6	5	6	23	29	23
10. Ֆրայպուրկ	6	3	8	24	37	21
11. Հանովեր 96	5	5	7	30	37	20
12. Հանգա Ռոսթր	5	4	8	24	27	19
13. Պրուսիա Մեյնշտր.	5	4	8	18	24	19
14. 1860 Միւնխի	5	4	8	18	26	19
15. Քայզերսլաուերթըն	5	3	9	20	31	15
16. Քեոլն	3	4	10	15	26	13
17. Հերթա Պերլին	2	7	8	15	33	13
18. Այնթրախ Ֆրանկֆորթ	3	3	11	16	28	12

## ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿ ԱՍԹՈՆ ՎԻԼԱ ԴՈՒՐՍ ԶԳԵՑ ՉԵԼՍԻՆ

Անգլիոյ ֆուտպոլի լիկայի բաժակի մրցաշարքի քառորդ փուլի արտադրութեան մրցումներուն, Ասթոն Վիլա յաջողեցաւ մեծ իրագործում մը կատարել, երբ իր դաշտին՝ «Վիլա Փարք» մէջ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Չելսիին: Հակառակ անոր որ Վիլա այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման 16րդ դիրքը, այն յաջողեցաւ ընդհանուր դասաւորման 16րդ դիրքին վրայ գտնուող յունտնեան կայմը:

Միտրոպոլիտո փենայիթներով միայն (5-4) յաջողեցաւ պարտութեան մատնել թոթենիան: Մրցումին 120 վայրկեանները վերջ գտան 1-1 արդիւնքով: Պոլսոն վերջին րոպէսներուն ընթացքին 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Ստուրթեմբուրը, մինչ Արսենալ իրագործեց յաջողութեան մատնելը 3րդ դիրքին վրայ գտնուող պարտութեան մատնելով Ուեսթ Պրոմիթի:

Ստորեւ՝ կիսաարտակա՛ն հանգրուանի մրցումներուն յայտագիրը (մրցումները տեղի պիտի ունենան Յունտնալի կէսէն ետք).

Պոլսոն - Ասթոն Վիլա  
Արսենալ - Միտրոպոլիտո  
●ՍԿԱՌԱԿ անոր որ Անգլիոյ ֆուտպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան 2003-2004 եղանակը տակաւին իր կէս ճամբան չի կտրած, սակայն Անգլիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը երեկ յայտարարեց, որ 2004-2005 եղանակը պիտի սկսի Շաբաթ, 14 Օգոստոս 2004ին եւ պիտի աւարտի Շաբաթ, 14 Մայիս 2005ին:

## ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԵՐԹԻ ՎԵՐՋԻՆ ԸԱՆԳՐՈՒԱՆԻ ԳԱԳԱԹԻ ՃԱԿԱՏՈՒՄԸ՝ ԱՅՍՕՐ ԼԻՈՆԻ ԵՒ ՓԱՐԻՉ ՍԵՆ ԺԵՐՍԵՆԻ ՄԻՋԵՒ

Ֆրանսայի ֆուտպոլի ախոյեանութեան 19րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենայ բացման մրցումը, որուն ընթացքին Լիոն իր դաշտին վրայ կը հիւրընկալէ Փարիզ Սէն Ժերմէնը: Նշենք, թէ մնացեալ ինը ճակատումները տեղի կ'ունենան վաղը:

2րդ դիրքը գրաւող Լիոն, որ այժմ միայն կողմը չէր ձգել առաւելութեամբ կը գերազանցէ փարիզեան կազմը, պարագլուխի դիրքը գրաւող Մոնթպրիոնի նման մրցում մը նուազ կատարած է: Անիկա նոյնիսկ եթէ իր երկու մրցումներուն ընթացքին յաղթանակ արձանագրէ, պիտի չկարենայ գերազանցել Մոնթպրիոն, որովհետեւ այժմ ընթացող կէտով ետ կը մնայ անկէ: Հետեւաբար այս մէկը կը նշանակէ, որ իշխանապետական կազմը հանդիսացաւ աշնան ախոյեան:

Վստահաբար մարզիչ Վահիտ Հաշիմիի կազմը՝ Փարիզ Սէն Ժերմէնը պիտի չփափարի ձեռնարկին իր արձակուրդը սկսի պարտութեամբ: Անոր կազմէն սակայն պիտի բացակայի խմբագետ Ֆրետերիք Տեհիլ (կախակայմաւ): Անոր բացակայութենէն վստահաբար որ պիտի փորձէ օգտուի Լիոն, աւելիով մը բարելաւելու համար երկրորդ դիրքը:

Մոնթպր, որ միակ խումբն ըլլալով ցարդ

կրած է միայն մէկ պարտութիւն, 19րդ հանգրուանին հիւրը պիտի ըլլայ Ռէննի:

Ստորեւ՝ 19րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (ժամերը՝ Պէլլու-Թի ժամով).

●ՖՐԱՆՍԱՅԻ ֆուտպոլի լիկայի բաժակի մրցաշարքին, որուն վիճակաճգութիւնը տեղի ունեցաւ երեկ, բաժակակիր Օթէն Ա. հանգրուանին իր մրցումը պիտի կատարէ իր դաշտին վրայ, հիւրընկալելով Մոնթպրիոնը: Մոնթպր հիւրը պիտի ըլլայ Մէսի, մինչ Մարսէյ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Սթրասբուրգը: Նշենք, թէ մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի Յունտնալի 3ին եւ 4ին:

Ստորեւ՝ Ա. դասակարգին մաս կազմող խումբներուն, Ա. հանգրուանին կատարելիք մրցումներուն յայտագիրը.

Ստորեւ՝ 1-16րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Լիլ - Սէնթ Էթիէն 2-3  
Կեոնիոն - Պասքիա 3-1  
Թրուա - Օքսէն 0-3  
Նիս - Մէս 1-0  
Նանց -  
Քլեմոնտ ֆերան 1-0  
Լը Ման - Սրտան 3-1  
Սոչո - Մարսէյ 1-0  
Լանս - Պրոսո 2-0

Ֆրանսայի լիկայի բաժակի մրցաշարքին, որուն վիճակաճգութիւնը տեղի ունեցաւ երեկ, բաժակակիր Օթէն Ա. հանգրուանին իր մրցումը պիտի կատարէ իր դաշտին վրայ, հիւրընկալելով Մոնթպրիոնը: Մոնթպր հիւրը պիտի ըլլայ Մէսի, մինչ Մարսէյ իր դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Սթրասբուրգը: Նշենք, թէ մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի Յունտնալի 3ին եւ 4ին:

Ստորեւ՝ Ա. դասակարգին մաս կազմող խումբներուն, Ա. հանգրուանին կատարելիք մրցումներուն յայտագիրը.

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.

Սալամանքա - Ռեալ Մարսկոսա 2-3  
Լըվանթ - Մալորքա 2-0  
Լանցարոթ - Սելիլա 0-1  
Խերես - Մալալա 0-1  
Քորտոպա - Ռեալ Պեթիս 1-3  
Կիմեսաթիքա - Տեփորթիո Քորունա 1-2  
Սիլուտաո Տը Մուրսիա - Պարսելոնա 0-4  
Քատիս - Օստալա 1-2  
Ալմէյրա - Սեսալ Վայատոլիտ 1-3  
Վալենսիա - Միրսիա 2-0  
Ալաւես - Ռեալ Սոսիտատ 2-1  
Սելթա Վիկո - Էսփանիո 3-1  
Լէոնեսա - Աթլետիքո Մաորիտ 0-1  
Ալկեսիբաս - Վիարեալ 0-1  
Էյպար - Ռասիկ Սանթանտեր 0-0  
(Էյպար փեճալքներով՝ 3-2 յաղթական)

## ԶՕՐ. ՍՈՒՅԷՅԼ ԽՈՒՐԻ ԿԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԷ Զ. Մ. Ը. Ս. Ը.

Լիբանանի Ողիմպիական յանձնախումբը նախագահ Վոր. Սուհէյլ Խուրի, Հ. Մ. Ը. Մ. Լիբանանի Երջանային Վարչութեան ուղարկած նամակին մէջ շնորհաւորեց Հ. Մ. Ը. Մ. Լիբանանի ընտանիքը՝ փինկ փունկի աղջկանց կատարած մեծ իրագործումին համար: Հ. Մ. Ը. Մ. Լիբանանի կայմը Երեքշաբթի, 16 Դեկտեմբերին հանդիսացաւ փինկ փունկի արաբական ախոյեան խումբերու ախոյեանութեան մրցաշարքին ախոյեան: Զօր. Սուհէյլ Խուրի իր նամակին մէջ աւելցուց նաեւ, որ առաջին անգամ ըլլալով չէ, որ ախոյեան Հ. Մ. Ը. Մ. Լիբանանի կատարէ մեծ իրագործումները կը կատարէ:

## ՍՊԱՆԻՅԱՅ ԳՈՒՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿ

### Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ 5 ԽՈՒՄԲԵՐ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ ԿԱՆՈՒԽԷՆ

Սպանիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքի 1-32րդ հանգրուանի մրցումներուն, Ա. դասակարգին մաս կազմող հինգ խումբեր, դուրս մնացին մրցաշարքէն, երբ պարտութիւններ կրեցին իրենց մրցակիցներէն:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.

Սալամանքա - Ռեալ Մարսկոսա 2-3  
Լըվանթ - Մալորքա 2-0  
Լանցարոթ - Սելիլա 0-1  
Խերես - Մալալա 0-1  
Քորտոպա - Ռեալ Պեթիս 1-3  
Կիմեսաթիքա - Տեփորթիո Քորունա 1-2  
Սիլուտաո Տը Մուրսիա - Պարսելոնա 0-4  
Քատիս - Օստալա 1-2  
Ալմէյրա - Սեսալ Վայատոլիտ 1-3  
Վալենսիա - Միրսիա 2-0  
Ալաւես - Ռեալ Սոսիտատ 2-1  
Սելթա Վիկո - Էսփանիո 3-1  
Լէոնեսա - Աթլետիքո Մաորիտ 0-1  
Ալկեսիբաս - Վիարեալ 0-1  
Էյպար - Ռասիկ Սանթանտեր 0-0  
(Էյպար փեճալքներով՝ 3-2 յաղթական)


## ԵՆ. ՊԻ. ԷՅ.

### ՄԻՔՍՐԸՉ, ՍԵԼԹԻՔՍ ԵՒ ՍՓԸՐԸՉ՝ ՅԱՂԹԱԿԱՆ

ԵՆ. ՊԻ. Էյ. Ի երեկուան մրցումներուն, անցեալ եղանակի ախոյեան՝ Սան Անթոնիօ Սփրիտ արձանագրեց յաջողական իր ութերորդ յաղթանակը, երբ իր դաշտին վրայ 73-70 արդիւնքով պարտութեան մատնեց Թորոնթօ Ռեյթթըրը: Այդ յաղթանակին մէջ իր կարելու բաժինը ունեցաւ Թիմ Տանքըն, որ նշանակեց 30 կէտ եւ 13 ռիպաւնտ: Անոր խմբակից Թոնի Փարքըր նշանակեց 16 կէտ:


Ինտիանապոլիսի մէջ, Ինտիանա Փէյսըրը 94-90 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրէն՝ Օրլանտօ Մէճիքէն: Մրցումին աւարտէն 15 երկվայրկեան առաջ Ռոտ Սթրիքլէնտ իր նշանակած կէտերով պատճառ դարձաւ որ Մէճիք կրէ եղանակի իր 21րդ պարտութիւնը (անիկա ամէնէն աւելի շատ պարտութիւն կրող խումբն է): Անոր խմբակից Թրէյսի Մաքլընտի նշանակեց 21 կէտ եւ 11 էսիսը:

Փօլ Փիլիպ կողմէ նշանակեց 25 կէտ, 11 ռիպաւնտ եւ 7 էսիսը պատճառ դարձաւ որ անոր կայմը՝ Պոսթըն Սթրիքս 105-103 արդիւնքով պարտութեան մատնէ իր հիւրը՝ Տալաս Մալվերթը: Տալասի մարզիկներէն Տրք Նովիթցը



Թրէյսի Մաքլընտի (ճախից)

թեան մատնէ իր հիւրը՝ Տալաս Մալվերթը: Տալասի մարզիկներէն Տրք Նովիթցը



Տանքըն

թէ նշանակեց 30 կէտ եւ 13 ռիպաւնտ, սակայն անոր կայմը

կրեց եղանակի իր 9րդ պարտութիւնը: Սիեթլի մէջ տեղի ունեցած մրցումին, դաշտին տերերը՝ Սուփըրսոնիքս միայն մէկ կէտի տարբերութեամբ 99-98, պարտութիւն մը կրեցին իրենց հիւրէն՝ Տենսիլը Նակթթէն: Յաղթական կայմին մարզիկներէն՝ Անտոն Միլըր նշանակեց 20 կէտ, 11 ռիպաւնտ եւ 9 էսիսը:

Հակառակ էլլն Այվըրսընի բացակայութեան (վիրաւոր), անոր կայմը՝ Ֆիլատելֆիա Սիքսըրս իր դաշտին վրայ 87-76 արդիւնքով պարտութեան մատնեց Մայնթի Հիթ: Այվըրսընի հիւրընկալեց Սիեթլի Սուփըրսոնիքսը: Նշենք, թէ մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի Յունտնալի 3ին եւ 4ին:

Ստորեւ՝ մրցումներուն արդիւնքները.

Սալամանքա - Ռեալ Մարսկոսա 2-3  
Լըվանթ - Մալորքա 2-0  
Լանցարոթ - Սելիլա 0-1  
Խերես - Մալալա 0-1  
Քորտոպա - Ռեալ Պեթիս 1-3  
Կիմեսաթիքա - Տեփորթիո Քորունա 1-2  
Սիլուտաո Տը Մուրսիա - Պարսելոնա 0-4  
Քատիս - Օստալա 1-2  
Ալմէյրա - Սեսալ Վայատոլիտ 1-3  
Վալենսիա - Միրսիա 2-0  
Ալաւես - Ռեալ Սոսիտատ 2-1  
Սելթա Վիկո - Էսփանիո 3-1  
Լէոնեսա - Աթլետիքո Մաորիտ 0-1  
Ալկեսիբաս - Վիարեալ 0-1  
Էյպար - Ռասիկ Սանթանտեր 0-0  
(Էյպար փեճալքներով՝ 3-2 յաղթական)

Ստորեւ՝ դասաւորումը.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԶՐԱՍ

Ստորեւ՝ դասաւորումը.

Ստորեւ՝ երեկուան մրցումներուն արդիւնքները.

Ստորեւ՝ դասաւորումը.

ԱՐԵՎԵԼԵԱՆ ԶՐԱՍ

Ստորեւ՝ դասաւորումը.

Ստորեւ՝ դասաւորումը.

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐ ՅԱՐՉԱԿՈՒՄԻ ՄԸ ՉԵՌՆԱՐԿԵՑԻՆ ՆԱՊԼՈՒՄԻ ԴԵՄ

Իսրայելեան ուժեր չորս պաղեստինցիներ սպաննեցին Այրյորդանանի դէմ գործընթացը յարձակումի մը: Ներխուժումին թիրախը Նապլուս քաղաքն էր, ուր իսրայելեան ուժերը պաղեստինցի երեք ծայրայեղականներ սպաննեցին: Չինուորական աղբիւրի մը համաձայն, պինտները տանիքի մը կրակ բացած էին պինտներուն վրայ: Չինալեաներէն երկուքը ԷՖ. Փէ. Էլ. Փէ.ի անդամներ են, իսկ երրորդը՝ Համախ: Չորրորդ պաղեստինցին սպաննուեցաւ, երբ կը փորձէր ական մը «ցանել» ճամբուն վրայ: Պաղեստինեան ապահովութեան աղբիւրներ եւ ակադեմիկներ սակայն յայտնեցին, որ չորրորդը պինտ անպէս քաղաքային մըն էր, որ փոռ կը մտնէր աշխատելու, երբ պինտներ տասնեակ մը փամփուշտներով սպաննած են պինտ: Ականատեսներ աւելցուցին, որ պինտները նաեւ բնակարաններ կը խուլարկեն ծայրայեղականներ ձերբակալելու յոյսով:

Միւս կողմէ, Իսրայելի ելեւնուտքի փոխ նախարար Մէյր Շիթրիթ պոզիտիւ գնահատումներ արեւելեան միջոցառումներէ, յատկապէս եթէ անոնց ծիրէն ներս կ'իջնայ պաղեստինեան կարգ մը շրջաններէ հեռացումը: Շիթրիթ ըսաւ, որ աւելի լաւ է խաղաղութիւն բերել, քան թէ հեռանալ շրջաններ՝ պահելով պատերազմական վիճակը:

Վարչապետ Արիէլ Շարոն համոզուած է, որ պաղեստինցիները խաղաղութեան ընկերակից չեն կրնար ըլլալ, հետեւաբար ան որոշած է որդեգրել միակողմանի միջոցառումներ, որոնց դէմ սակայն կ'ընդդիմանան պաղեստինցիներ ու իսրայելցիներ:

● **ՉԻՆԱՍՏԱՆԻ** նախագահ Հու ձինթաօ երէկ կոչ ուղղեց Իսրայելի վերսկսելու երկխօսութեան պաղեստինցիներուն հետ, նկատի ունենալով, որ խաղաղութեան ճամբու քարտէսը պատմական առիթ մըն է լուծելու համար Միջին Արեւելքի տագնապը:

● **ԻՍՐԱՅԷԼԻ** պաշտպանութեան նախարարութիւնը յայտնեց, որ Երուսաղէմն ու Այրյորդանանը եզերող պատին կառուցումը պիտի աւարտի 2005ի վերջաւորութեան: (ԱՅՓ)

### ԻՐԱՔԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ ԸԼԼԱԼՈՒՆ ՀԱՄԱՐ

## ՓՈՒԹԻՆ ԽՍՏԻ ԲՆՆԱԴԱՏԵՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՇԱՆԳՆԵՐԸ

ՄՈՍԿՈՒՍ, 18 (ԱՅՓ).- Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին Հինգշաբթի օր խիստ ոճով քննադատեց Միացեալ Նահանգները՝ Իրաքի դէմ պատերազմ յայտարարած ըլլալուն համար: Փութին, որ կը խօսէր ամերիկացի պատուիրակ ձեռնարկի հետ հանդիպում ունենալէ առաջ, դիտել տուաւ, որ այլ երկիրի մը դէմ ուժի գործածութիւնը միայն ՄԱԿ կրնայ արտօնել ու լիարժեք չորսն էր երեւէ արաք, որ կը գործուի այս ծիրէն դուրս արդար ու արդարացուցիչ չի կրնան նկատուիլ:

Ռուսիա անցեալ շաբթուին ի վեր բարկացած է Ռաշինկոթընէն, որ յայտարարած էր, թէ Իրաքի վերաշինութեան աշխատանքներուն պիտի մասնակցին միայն այն երկիրները, որոնք մաս կազմած են պատերազմի ճակատին: Փութին շեշտեց, որ Մոսկուա կը մնայ Ռաշինկոթընի ընկերակիցը անհրաժեշտութեան դէմ պատերազմին,

բայցեւայնպէս Իրաքի հարցը ուրիշ է, որովհետեւ Սատտամ Հիւսէյն միջազգային ահաբեկիչներու ցանց մը չէր ղեկավարէր:

Փութին անուղղակի կերպով ակնարկութիւն կատարեց Միացեալ Նահանգներու գերիքնազատութեան միջազգային գետնի վրայ: Փութին յիշեցուց, որ պատմութեան մէջ հզօրագոյն կայսրութիւններ տապալած են, որովհետեւ հաւատացած են, թէ անպարտելի են:

Պէյքըր Մոսկուա կ'այցելէ համոզելու համար Փութինը, որ չնչէ կամ կրճատէ Իրաքի պարտքը: Յստակ չէ տակաւին, թէ ինչ պիտի ըլլայ Կրեմլինի հակադարձութիւնը: Իրաք 8 միլիարտ տոլար պարտական է Ռուսիոյ: Պարտքին մէկ մասը մնացած է Խորհրդային Միու-



թեան օրերէն:

### ՓՈՒԹԻՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԹԵԿՆԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Փութին հաստատեց, որ նախագահական երկրորդ նստաշրջանի մը համար քննարարուի պիտի մղէ: Ռուսիոյ նախագահական ընտրութիւնները պիտի կայանան Մարտին: Փութին հերքեց սակայն, որ սահմանադրութեան փոփոխութիւն պիտի առաջարկէ նախագահական երրորդ նստաշրջանի մը իրաւունքը ապահովելու համար:

### ԿՈՐԻՉԱՅԻՆ ԹԹԱՍՏՐԱՐԻՆ ԳԾՈՎ

## ԻՐԱՆ ՍՏՈՐԱԿՐԵՑ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԻ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՄԸ

ՎԻԵՆՆԱ, 18 (ԱՅՓ).- Իրան Հինգշաբթի օր ստորագրեց կորիպային ուժանիթի խաղաղ գործածութեան համաձայնագիրն կցուած յաւելում մը, որուն լոյսին տակ Իրանի դռները բաց

պիտի ըլլան միջազգային անակնկալ քննութիւններու դիմաց:

Հիւլեական ուժանիթի միջազգային գործակալութեան մէջ Իրանի ներկայացուցիչը Ալի Աքպար Սալեհի ստորագրեց համաձայնագիրը՝ գործակալութեան կեդրոնատեղիին՝ Վիեննայի մէջ: Ստորագրութեան հանդիսութեան ներկայ էր միջազգային գործակալութեան տնօրէն Մոհամէտ Պարաւի: Իրան այս ձեւով կորիպային ուժանիթի իր բոլոր գործա-

րաններն ու կեդրոնները բաց պիտի պահէ քննիչներուն դիմաց:

Միացեալ Նահանգներ եւ Ֆրանսա Իրանը կ'ամբաստանեն զաղտնօրէն կորիպային պէնքերու պատրաստութիւնը հետապնդելու ճիգերով: Իրան ամիսներէ ի վեր կը մերժէր ստորագրել համաձայնագիրը՝ յայտարարելով որ կորիպային պէնքերու ծրագիրներ չունի: Յիշեալ յաւելումը մշակուած էր 1997ին՝ սանձելու համար կորիպային ուժանիթի գործածութիւնը պինտութեան ծրագիրներու մէջ:

### «ՀԱՅՖԻԼՄ»Ի ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐ ՀՈՒՄ

Ծարուակուած ճիշդ էջէն  
Ժպտակներու արտադրութեան «Հայֆիլմ» ընկերութիւնը, որ գերծ է պարտքերէ, կարողակաճութիւնը ունի տարեկան արտադրելու 3-5 ժպտակէն: Զայն վաճառքի հանելու որոշումը կը նպատակադրէ արդիականացընել սրիտին եւ այդպիսով արտադրել ժպտակներ:  
«Հայֆիլմ» ընկերութեան նոր տէրը պարտաւոր է արտադրելու տարեկան նուազագոյնը երեք ժպտակէն, որոնց մէջ պէտք է ներառուին Հայ բեմադրիչներ ու դերասաններ:  
Կը նախատեսուի, որ «Հայֆիլմ»ի սեփականաշնորհումը կատարուի 2004ի գարնան:

**N. DEDEIAN s.a.r.l**  
SANITARY WEAR & TILES SINCE 1951

LEBANON - Beirut Nahr El-Mot  
Roumieh Highway N. Dedelian Center  
Cell: (+961) - 3 - 204309 Tel: (+961) - 1 - 901092  
Fax: (+961) - 1 - 901093

LEBANON - Tripoli El-Mina - Custom Str.  
Tel: (+961) - 6 - 815095 Telefax: (+961) - 6 - 202126  
E-mail: info@ndedeian.com  
Website: www.ndedeian.com

**TOGETHER WE ARE STRONGER**  
**ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ**

**USMIL AFHIL**  
Armenian Mutual Fund  
Tel. / Fax: 01 242558 - 242557

### ԳԵՐՄԱՆԻԱ ՔԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԸ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՒ

ՇՅՈՒԹԿԱՐԹ, 18 (ԱՅՓ).- Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան պատասխանատուներէն մէկը երկու տարի բանտարկութեան դատապարտուեցաւ Գերմանիոյ մէջ՝ ոճրային կապակերպութեան մը անդամակցած ըլլալու յանցանքի մը համար:

Գերմանական ատեանը յայտարարեց, որ 37ամեայ քիւրտը ՔԱԿի ղեկավար եղած է Պերլինի մէջ, 2001ին:

### ԲՐԻՏԱՆԻԱ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՀԱՄՈՉԵԼ ԻՐԱՔԻ ՊԱՐՏԱՏԵՐ ԵՐԿԻՐՆԵՐԸ

ԼՈՆՏՈՆ, 18 (ԱՅՓ).- Բրիտանիա յայտնեց, որ պիտի շարունակէ ճիգերը՝ համոզելու համար Իրաքի պարտատէր երկիրները, որպէսզի ջնջեն կամ մեղմացնեն պարտքը: Իրաքի արտաքին պարտքը մօտաւորապէս 120 միլիարտ տոլար է: Ասոր վրայ պէտք է աւելցնել Քուէյթի պահանջած հատուցումը:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր Հինգշաբթի օր հանդիպում ունեցաւ ամերիկացի յատուկ պատուիրակ ձեռնարկի հետ, որ երոպական շրջապտոյտի մը ձեռնարկած է՝ համոզելու համար պարտատէր երկիրները պիտի մտնեն կատարելու: Պէյքըր պարտութեան խոստումներ ապահոված է Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքէն եւ Գերմանիոյ վարչապետ Կերիարտ Շրէտրերէն: Պլէրի բանքերը ըսաւ, որ վարչապետը համաձայն է, որ Իրաքի պարտքերուն մէկ մասը պէտք է ջնջուի:

**ՄԱՅՔԸԼ ԺԷՔԱՐՆ  
ԿՐԼԱՅ 24 ՏԱՐՈՒՄԸ  
ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ  
ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ**

«Սի. Էն. Էն.» պատկերասփիւռի կայանը երէկ գիշեր հաղորդեց, որ փոփ աստղ երգիչ Մայքըլ ձեքսըն դատարանին կողմէ պաշտօնապէս (բայց ոչ՝ վերջնականապէս) դատապարտուեցաւ մանուկներու դէմ սեռային հալածանքի յանցանքով: Ան կրնայ մինչեւ 24 տարուան բանտարկութեան դատապարտուի: Արդէն իսկ բանտը գտնուող ձեքսըն յաճախ ամբաստանուած էր վերոյիշեալ յանցանքով:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**ՆԱՇԿԵՐՈՅԹ  
ՊԱՐԱՀԱՆԴԵՍ**  
Երկուշաբթի, 5 Յունուար 2004ի,  
Երեկոյեան ժամը 9:30ին սկսեալ,  
**BIEL PAVILLON ROYAL**  
տրախին մէջ:

**ԵՐԳԱՀԱՆԴԵՍ**  
Երեքշաբթի, 6 Յունուար 2004,  
Երեկոյեան ժամը 7:30ին  
**UNESCO** տրախին մէջ:

**ՏՈՍՏԵՐ ԿԸ ՎԱՏԱՌՈՒՆ**  
Obelix գրախանութ, Անթիլիաս - Promenade Զալքա  
Համազգայինի «Լեւոն Շանթ» կեդրոն  
Համազգայինի գրախանութ  
Տիպոքէք Geka - Սթիւտիո Վալէ, Հաճըն: